«Վէմ»-ի ղեկավար սկզբունքն է լինելու գիտական առարկայականությունն ու ճշմարտությունը, միայն ճշմարտությունը, ամբողջ ճշմարտությունը՝ համոզված, որ անգամ ամենաղառն ճշմարտությունը աւելի օգտակար է, քան ոսկեզօծ ու շաքարապատ սուտը»:

Սիմոն Վրացեան

Խմբագիր՝ ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆ

Վլադիմիր Բարխուդարյան
Սերգեյ Սարինյան
Աշոտ Մելքոնյան
Ռուբեն Սաֆրաստյան
Ալբերտ Ստեփանյան
Սուրեն Դանիելյան
Համլետ Պետրոսյան
Սամվել Մուրադյան
Լևոն Մկրտչյան

ՍՓՅՈՒՌՔ

Երվանդ Փամբուկյան - Լիբանան
Մկրտիչ Մկրտչյան - Լիբանան
Հարություն Քյուրքչյան - Հունաստան
Կարո Արմենյան - ԱՄՆ
Ռուբինա Փիրումյան - ԱՄՆ
Վաչե Բրուտյան - ԱՄՆ

համահայկական հանդես
Է (ԺԳ) տարի, 2015,
թիվ 3 (51), հուլիս-սեպտեմբեր

«Վէմ» համահայկական հանդես
Հրատարակիչ՝ **«Վէմ հանդէս» ՍՊԸ**

375010 Երևան, Միհեր Մկրտչյան փ. 12/1
հեռախոս՝ **52 18 76, 093 83 93 24**

Էլ. փոստ՝ **khoudinyan@yahoo.com**

Ինտերնետային կայք՝
vemjournal.org

ISSN 1829 - 1864

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԹՈՒՐՔ-ՔՐԴԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ 3

ՀԻՄՆԱՔԱՐԵՐ

Ֆրանկ Ռ. Անկերսմիթ (Գրոնինգեն)
ՎԵՑ ԴՐՈՒՅԹ ՆԱՐԱՏԻՎԻՍՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
Առաջաբանը և թարգմանությունը՝ Դավիթ Ռ. Մոսինյանի 9

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Կարեն Ա. Մսթևոսյան
ԳՐԻԳՈՐ ԱՊԻՐԱՏ ՄԱԳԻՍՏՐՈՍ
11-րդ դարի մոռացված մեծ իշխանը 24

Արարատ Մ. Հակոբյան
ՆՈՄԵՆԿԼԱՏՈՒՐԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 42

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երվանդ Գ. Տեր-Խաչատրյան
ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ «ՆԱԻԸ ԼԵՐԱՆ ՎՐԱՑ» ՎԵՊԸ 77

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վարդան Զ. Պետրոսյան
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԲԱՐԲԱՌԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ
Տարաժամանակյա տիպաբանության փորձ 115

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Նժդեհ Ա. Երանյան
ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՐՑԱԽԻ ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 128

ՄՇԱԿՈՒՅԹ

Սլավի-Ավիկ Հարությունյան (Մոսկվա)
ԺԱՆՐԻ ԽՆԴԻՐԸ ԱՐՎԵՍՏՈՒՄ
Ժանրի տարբերակման չափանիշներն ու հիմքերը 141

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Գևորգ Ս.Սրեփյանյան
1921 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 14-18-Ի ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆՏՈՒՄ
Նոր մանրամասներ Հայհեղկոմի ոճրագործությունների վերաբերյալ 161

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վրէժ - Արմէն Ե. Արթինեան (Մոնրեալ)
Jean-Paul Demoule, MAIS OÙ SONT PASSÉS LES INDO-EUROPÉENS? 179

ԱՐԽԻՎ

Գևորգ Մ. Խոդինյան
ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԸՆԴՀԱՏԱԿԻ ԼԵԳԵՆԴԸ
Մի ուշագրավ վավերագիր Ավետիս Ղարիբյանի (Պադվալի Վաղո) հեղափոխական գործունեության մասին 188

ՄԱՐ-Ի ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԵՐԸ
Մաս առաջին: ՀՅ Դաշնակցության գործունեության առաջին տարիները
Պատրաստեցին՝ Ռուբեն Հ. Գասպարյանը և Ռուբեն Օ. Սահակյանը 197

Հովիկ Բ. Գրիգորյան
ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻՆ
Օսմանյան դրամատան գրավման և դրա հետևանքների մասին 234

ՀԱՎԵԼՎԱԾ

Գեղամ Մ. Բադալյան
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵՐԻՆ
Մաս երկրորդ. Վանի վիլայեթի հարավային ու արևմտյան գավառները և Վան քաղաքը I (243)

CONTENT 278

СОДЕРЖАНИЕ 279

Նժդեհ Ա. Երանյան

ՆՈՐ ԳՏԱԾՈՆԵՐ ԱՐՑԱԽԻ ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Բանալի բառեր – մենհիր, վիշապ կոթող, մարդակերպ կոթող, Արցախ, Ուտիք, սկյութական մշակույթ, Արջաք կալե:

Քարի գեղարվեստական մշակումը Հայկական լեռնաշխարհում հազարամյակների պատմություն ունի: Մեզ հայտնի են զանազան մենհիրներ, վիշապ կոթողներ, ֆալոսատիպ կոթողներ, ուրարտական արձանագրական կոթողներ, մարդակերպ կոթողներ, սահմանաքարեր և այլն: Այս շարքը կարելի է եզրափակել վաղքրիստոնեական խաչակիր տարատիպ կոթողներով, տապանաքարերով և ի վերջո՝ խաչքարերով:

Ժամանակագրական այս մեծ ծիրում քարե տարատեսակ կոթողները ենթարկվել են ձևաբանական, տիպաբանական և իմաստաբանական փոփոխությունների, սակայն հավանաբար ունեցել են որոշակի գաղափարական ընդհանրություններ՝ որպես բացօթյա սրբազան միջավայրի կազմակերպիչներ և դոմինանտներ: Քարե կոթողների շարքում առանձնահատուկ ուշադրության են արժանի պատմական Հայաստանի Արցախ և Ուտիք նահանգներում հայտնաբերված մարդակերպ կոթողները, որոնք դուրս են մնացել մասնագետների ուսումնասիրությունից: Սույն հոդվածով կփորձենք ներկայացնել մեզ հայտնի քարե մարդակերպ կոթողները, նրանց պատկերագրության, թվագրության և գաղափարաբանության որոշ խնդիրներ:

Նշված կոթողներն իրենց կտրվածքում մոտավորապես ուղղանկյուն, սակայն ոչ կանոնիկ, տափակ երկայնական սալեր են, որոնք երկու հորիզոնական գոտիների միջոցով բաժանվում են երեք մասի՝ խորհրդանշելով մարդկային մարմնի երեք մասերը՝ գլուխը, իրանը և գոտկատեղից ներքևի հատվածը: Կոթողներն ունեն մոտավորապես 30–60 սմ լայնություն, 120–140 սմ բարձրություն և մինչև 20 սմ հաստություն: Ներկայումս Արցախի տարբեր շրջաններից հայտնի է 17 նման կոթող: Խորհրդային իշխանության տարիներին դրանց թիվը հասել է երկու տասնյակի: Սակայն կոթողներից մի քանիսը դեռևս այն ժամանակ անհետացել են իրենց հայտնաբերման վայրից: Հայտնի է, որ մեկ կոթող Մարտակերտի շրջանի Ճանկաթաղից

*Հոդվածն ընդունվել է տպագրության 18.02.2015:

1964 թ. տեղափոխվել է Բաքու[1]: Մյուսների ճակատագիրն անհայտ է:

Թվարկված կոթողներից ոչ մեկը չի հայտնաբերվել **in situ** դիրքում: Ավելին՝ թեև դրանք չեն գտնվել իրենց կանգնեցման նախնական վայրում, սակայն, ըստ երևույթին, վերջիններս շատ հեռվից չեն տեղափոխվել: Իսկ դա մեզ հուշում է, որ կոթողները կանգնեցվել են Արցախի հատկապես տափաստանային շրջաններում՝ Խաչենագետի ընդարձակ հովտի երկու կողմերում: Այս փաստը վկայում է, որ կոթողները կապված են տափաստանային մշակույթի հետ:

Չնայած այն բանին, որ մոնումենտալ քանդակագործությունն ունի լայն տարածում և շատ հին պատմություն և յուրաքանչյուր էթնո-մշակութային խմբում այն յուրովի է դրսևորվում, սակայն Արցախում հայտնաբերված կոթողների նշանակությունը և էթնո-մշակութային միջավայրը վերականգնելու և մեկնաբանելու համար մենք օգտվել ենք տարածաշրջանում հայտնի նմանատիպ այլ մարդակերպ կոթողների քննության արդյունքներից: Ուսումնասիրելով Հայկական լեռնաշխարհի և շրջակայքի վաղ շրջանի մշակույթը՝ նկատում ենք, որ համանման կոթողները Ք.ա. 1-ին հազարամյակում սփռված են եղել ողջ տարածաշրջանում: Մարդակերպ քարե կոթողներ հանդիպում են ինչպես Լոռի բերդում[2], Ջուջևանում[3], Հարժիսում[4], այնպես և Մեծ Հայքի Կորձայք նահանգի մասը հանդիսացող, ներկայիս Թուրքիայի Հանրապետության տարածքում գտնվող Հաքքարիում[5], Իրանի հարթավայրերում, մասնավորաբար՝ Արևելյան Ատրպատականում, ինչպես նաև Հյուսիսային Կովկասում և առհասարակ Եվրասիական տափաստանների[6] այլ շրջաններում: Մարդակերպ կոթողների այս լայն խումբը ունի բազմաթիվ պատկերագրական և ժամանակագրական բաժանումներ: Սակայն դրանք բոլորը կարծես թե մոտ են միմյանց գաղափարաբանական ներկայացման տեսանկյունից:

Մասնավորաբար Արցախում հայտնի մարդակերպ կոթողներին շատ նման սկյութական քարե մարդակերպ կոթողները, որոնք հայտնի են ողջ Հյուսիսային Կովկասում, Մերձսևծովում, Ղրիմում և այլուր, բաժանվում են ժամանակաշխարհագրական մի քանի խմբերի: Տարբեր են նաև մասնագետների կարծիքները այս կոթողների նշանակության վերաբերյալ: Սկյութական մարդակերպ կոթողները, որպես կանոն, պատկերում էին ռազմիկ սկյութին (հնարավոր է՝ նախահորը) և կանգնեցվում էին դամբարանների վրա: Ներկայումս հայտնի է շուրջ 160 այսպիսի կոթող[7]: Ինչ վերաբերում է խնդրո առարկա կոթողներին, ապա նրանք, ամենայն հավանականությամբ, թե՛ ժամանակագրությամբ, թե՛ պատկերման տեխնիկայով առավել մոտ են

1 Տես **Халилов М.,** Антропоморфные каменные изваяния Карабаха, «Азербайджанская археология», N 1-4, 2004, с. 100-104.

2 Տես **Devedjyan S.,** Stone stelae in the burial ground of Lori Berd, Aramazd, vol. IV, No 2, Yerevan, 2009, pp. 146-153.

3 Տես **Есаян С. А.,** Скульптура Древней Армении, Ереван, 1980, стр. 32, 34, 56 /табл. 47, рис. 2/, **Երանյան Ն.,** Երկու քարե մարդակերպ կոթող Ջուջևանից, «Մերձավոր Արևելք», VIII, Եր., 2012, էջ 73-78:

4 Տես **Есаян С. А.,** նշվ. ախ., էջ 30, 31, 55 /табл. 41, рис. 6/.

5 Տես **Sevin V.** 2005, Who where the naked warriors of Hakkari?, Archäologische Mitteilungen aus Iran und Turan, 37, pp. 163-166.

6 Տես **Melyukova A.,** Scythians of Southeastern Europe, Nomads of the Eurasian steppes in the Early Iron Age, CA, 1995, pp. 27-62.

7 Տես **Янин В.Л.,** Археология: Учебник, М., 2006, с. 307.

Հյուսիսային Կովկասի խմբին: Ըստ Վ. Օլխովսկու՝ Հյուսիսային Կովկասի կոթողների 77%-ը թվագրվում է Ք.ա. VII-VI դդ.[8]: Դատելով համեմատաբար համեստ պատկերագրությունից և մի շարք այլ առանձնահատկություններից՝ կարող ենք ենթադրել, որ, ամենայն հավանականությամբ, նույն ժամանակով են թվագրվում նաև Արցախի տափաստաններից հայտնի կոթողները: Ինչպես նշում է Վ. Օլխովսկին, սկյութական արձաններին նախորդել են մարդակերպ սյուները, հարթ սալերը և քանդակները: Արցախի քարե մարդակերպ կոթողները կարծես առավել համապատասխանում են հարթ քանդակների տեսակին: Նա նաև նշում է, որ արձանների մոտ նախաբազուկը դեմքին ծալած դիրքը բացառապես սկյութական ավանդույթ է[9], հանգամանք, որը գերակշռում է Արցախի քարե մարդակերպ կոթողների դեպքում:

Քարը մարդակերպությամբ ոճավորելու ավանդույթը այս օրինակներով, սակայն, չի սահմանափակվում: Նման քանդակով կոթողներ հանդիպում են նաև Իրանի հարթավայրային շրջաններում: Մասնավորաբար Չարլզ Բըրնեյը, ով 1978 թ. հետազոտություն է իրականացրել Արևելյան Ատրպատականում գտնվող Մեշքինշահիրի դաշտավայրում, նշում է, որ բազմաթիվ հայտնագործությունների շարքում առանձնանում են շարքերով տեղադրված հարյուրից ավելի ստելլաները, որ բաժանվում են չորս խմբի: Չնայած իրենց չափերի և քարի փորագրության որակի տարբերությանը, սրանք ունեն մի ընդհանուր և պարզորոշ հատկանիշ, որն է՝ կոպիտ մշակված դեմքը, գոտիներն ու դաշույնները կամ սրերը: Ձեռքերն ու մազերը ցույց են տրված դեմքի երկու կողմում, իսկ գոտու մեջ, անկյունագծով տեղադրված, մի փոքր զենք է, որ սովորաբար պատկերում է դաշույնն իր պատյանի մեջ, որը մի քանի օրինակների վրա ունի կեռ ծայր:

Այս ստելլաները, ինչպես նաև շատ գերեզմաններ ցաքուցրիվ տեղադրված են բլրալանջից այն կողմ, բնակավայրից դուրս և պատկանում են Արջաք Քալեին: Որոշ ստելլաներ վերաօգտագործվել են պատնեշների պաշտպանության ժամանակ, որն ապացուցում է վերջիններիս վաղ թվագրումը: Երկաթե դարի երկրորդ կեսը (Ք.ա. I հազ. սկիզբ) ամենահավանականն է այս հրաշալի ստելլաների համար, որոնց ընդհանուր կապը հյուսիսային տափաստանների քոչվոր ժողովուրդների հետ ոչ մի կասկած չի հարուցում[10]:

Նույն կոթողների մասին խոսելով՝ Ք. Պիլլերը նշում է, որ այս տարածքում վերջերս իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ որոշ բրոնզե դաշույններ են հայտնաբերվել կոթողների շրջակայքի դամբարաններից: Տիպաբանորեն այս դաշույնները ունեն շատ լավ զուգահեռներ Հյուսիսային Իրանում, հատկապես Թալիշի տարածաշրջանում Մորգանի կողմից պեղված նյութի հետ: Համաձայն վերջին ուսումնասիրությունների՝ այդ տարածքի նման զենքերը թվագրվում են Ք.ա. 1000 թվականով: Սա իր հերթին ցուցում է, որ Իրանի տարածքից հայտնաբերված վերոնշյալ կոթող-

8 Տես **Ольховский В.С., Евдокимов Г.Л.,** Скифские изваяния VII-III в.в. до н.э., Москва, 1994, с. 41.
9 Տես **Ольховский В.С., Евдокимов Г.Л.,** նշվ. աշխ., էջ. 77.
10 Տես **Burney Ch.,** Meshkinshukr survey, Iran, Vol. XVII, 1979, pp. 155-156.

ները կարող են թվագրվել Ք.ա. 2-րդ հազարամյակի վերջով[11]:

Մեշքինշահիրում աշխատել է նաև Թեհրանի Թարբիաթ Մոդարրես համալսարանի իրանական արշավախումբը՝ Ալի Ռեզա Հոջաբրի Նովբարի գլխավորությամբ, որը զբաղվել է բնակավայրի տարածքից դուրս գտնվող որոշ դամբարանների մաքրման աշխատանքով: Տարածքը մաքրելուց հետո նա հայտնաբերել է դեմքով դեմ դիմաց կանգնեցված մարդակերպ կոթողների երկու երկար շարք, որոնք կազմում էին 1,5 մ լայնությամբ նեղ միջանցք: Ողջ աշխատանքի արդյունքում Ալի Ռեզա Հոջաբրի Նովբարին ընդհանուր առմամբ բացահայտել է 400 նմանատիպ կոթողներ[12]:

Ք.ա. 1-ին հազարամյակում Արևելյան Ատրպատականի և Կովկասի, հատկապես Հյուսիսային Կովկասի սերտ կապերին իր մի քանի աշխատություններում անդրադարձել է Մ. Պոգրեբովան[13]: Արցախի տափաստաններից հայտնի այս կոթողները ևս գուցե նման կապերի արդյունքն են:

Խնդրո առարկա կոթողների գաղափարաբանությանն անդրադառնալիս դարձյալ պետք է օգտվենք տարածաշրջանի համանման կոթողների ուսումնասիրությունից: Իրանական հարթավայրերից հայտնի կոթողների վերաբերյալ Չ. Բըրնեյը կարծիք է հայտնել, որ, ամենայն հավանականությամբ, դրանք մահացած զինվորների գերեզմանաքարեր են, ընկերներ կամ թշնամիներ: Սակայն նրանց նախնական գործառույթը դեռևս վերջնականապես պարզ չէ[14]:

Ինչ վերաբերում է սկյութական կոթողների գաղափարաբանությանը, ապա վերջիններս բավական բազմաբնույթ են: Դրանք իրենց ավելի քան երեքհարյուրամյա պատմության մեջ ենթարկվել են ձևային, հնարավոր է նաև՝ գաղափարաբանական էվոլյուցիայի: Պ. Շուլցի կարծիքով այդ էվոլյուցիան ընթացել է մենհիրներից և մարդակերպ ստելլաներից դեպի մարդակերպ կոթողները, ապա կիսարձանները, որոնց դեպքում սկսվեց էլ ավելի մեծ տեղ հատկացվել գլխի պատկերմանը[15]: Նա հավանական է համարում, որ սկյութական արձանները կապված են բրոնզի դարի մարդակերպ կոթողների հետ, և առանձնացնում է սկյութական կոթողների ութ տարածական խմբեր[16]: Գործառութային առումով սկյութական արձանները հանդիսանում էին ինչպես գերեզմանաքարեր, այնպես էլ պաշտամունքային սիմվոլներ, որոնք տեղակայված էին կուրգանների գագաթին կամ սրբարանի կենտրոնում: Պատահական չէ, որ Արցախի տափաստանային հատվածներում, որտեղից և հայտնաբերվել են քարե կոթողները՝ Խաչենագետի ձախ հովտում, սփռված են շուրջ 15 կուրգաններ, որոնք գուցե ինչ-որ կապ ունեն խնդրո առարկա կոթողների հետ[17]: Վերջիններս, սակայն,

11 Տես **Piller Ch. K.,** Northern Iran in the Iron Age II and III: A neighbor of Urartu?,Aramazd, Vol. V, No. 2, 2010, pp. 54-55.

12 Տես **Azarnoush M.,** Helwing B., Recent archaeological research in Iran: Prehistory to Iron Age, Archaeologische Mitteilung aus Iran und Turan, 37, 2005, S. 216-217.

13 Տես **Погребова М.Н.,** К вопросу о связях восточного Закавказья и Ирана в конце II- начале I тыс. до н.э., «История иранского государства и культуры», М., 1971, с. 191-195., **Погребова М.Н.,** Несколько иранских кинжалов на Кавказье, «Краткие сообщения института археологии», вып, 3, Москва, 1965, с. 11-19.

14 Տես **Burney Ch.,** նշվ. աշխ., էջ 156:

15 Տես **Шульц П. Н.,** Скифские изваяния Причерноморья «Античное общество», М., 1967, с. 227.

16 Տես **Ольховский В.С.,** Евдокимов Г.Л., նշվ. աշխ., էջ 10, տես նաև, **Шульц П.Н.,** նշվ. աշխ., էջ 329:

17 Տես **Тер-Аветисян С.,** Памятники древности Карабаха и скифская проблема, «Арменоведческие

առայժմ պեղված չեն: Ուստի վերջնական եզրահանգում անելը դեռ վաղ է:

Ստորև ներկայացնում ենք Արցախի տարածքից հայտնի մարդակերպ կոթողների պատկերագրությունը և տեխնիկական լուծումները:

Կոթող 1 . Դիմացի կողմից կոթողը լավ է պահպանված: 60 սմ լայնությամբ և 130 սմ բարձրությամբ այս կոթողի գլուխը կլոր է, աչքերը պատկերված են կլոր շրջանակների տեսքով, քիթը T-աձև է, բերանը բացակայում է: Ձեռքերը խիստ ռելիեֆ են՝ ծալված կրծքին: Դաստակների վրա առկա են երեքական ակոսներ, որոնք հավանաբար ապարանջաններ են պատկերում: Կոթողը հակառակ կողմից վատ է պահպանված: Երևում են մեջքին փռված մազերը, որոնք հասնում են մինչև գոտկատեղ: Փռված մազերի վրա՝ գոտկատեղին, ամրացված է դաշույն, նկատելի են շեղբի երկու զուգահեռ գծերը, դաստակի մասը կամ լավ չի պահպանվել կամ ընդհանրապես չի քանդակվել:

Կոթող 2. Դիմացի կողմից լավ պահպանված չէ: Ունի 45 սմ լայնություն և 105 սմ բարձրություն: Գլուխը կլոր է, դեմքին ռելիեֆ փորագրության միջոցով պատկերված են աչքերը և T-աձև քիթը, բերանը պատկերված է բարակ ակոսի միջոցով: Ձեռքերը ծալված են կրծքին, մատները պարզված են դեպի վեր: Դաստակներին դարձյալ առկա են երեքական ակոսներ: Կոթողը հակառակ կողմից լավ է պահպանված, սակայն հարուստ պատկերագրություն չունի. պատկերված են մեջքին փռված մազերը, որոնք հասնում են մինչև գոտկատեղ:

Կոթող 3. Դիմացի կողմից լավ է պահպանված: Ունի 65 սմ լայնություն և 140 սմ բարձրություն: Գլուխը կիսակլոր է, աչքերը և T-աձև քիթը դարձյալ պատկերված են ռելիեֆ փորագրության միջոցով, բերանը պատկերված է կիսակլոր ակոսի տեսքով: Ձեռքերը՝ պատկերված ռելիեֆ փորագրության միջոցով, ծալված են կրծքին, իսկ ձեռքերի միջև մակերևույթը փորված է: Դաստակներին դարձյալ պատկերված են երեքական ակոսներ: Կոթողը հակառակ կողմից լավ է պահպանված, սակայն հարուստ պատկերագրություն չունի. մեջքին փռված երկշերտ մազերը հասնում են մինչև գոտկատեղ:

исследования», Ереван, 2010, с. 175-194.

Կոթող 4. Դիմացից լավ պահպանված չէ: Առանձնանում է համեմատաբար փոքր չափսերով՝ լայնությունը՝ 33 սմ, իսկ բարձրությունը՝ 97 սմ: Գլուխը կիսակլոր է, դեմքին նշմարվում են աչքերը և Т-աձև քիթը, որոնք պատկերված են ռելիեֆ փորագրության միջոցով, բերանը կամ ընդհանրապես քանդակված չէ, կամ չի պահպանվել: Ձեռքերը պահպանված չեն, նշմարվում են միայն կրծքին ծալված, դեպի վեր ուղղված մատները, և, դատելով դրանց դիրքից, պետք է ենթադրել, որ ձեռքերը հավանաբար նույն դիրքով են քանդակված եղել, ինչ որ մյուսները: Հակառակ կողմից կոթողը դարձյալ վատ է պահպանված. նշմարվում են միայն մեջքին փռված մազերը:

Կոթողը համեմատաբար կոպտատաշ է, ինչով առանձնանում է այս շարքի մյուս կոթողներից:

Կոթող 5. Դիմացից լավ պահպանված չէ: Ունի 50 սմ լայնություն և 120 սմ բարձրություն: Գլուխը կլոր է: Չռված կլոր աչքերը պատկերված են ռելիեֆ փորագրության միջոցով, քիթը պահպանված չէ, սակայն պետք է ենթադրել, որ պատկերված է եղել նույն ձևով: Ձեռքերը ծալված են կրծքին, որոնց միջև մակերևույթը փորելու միջոցով ստացել են երկու երկարավուն ակոսներ: Դաստակներին նշմարվում են երկուական գծեր: Հակառակ կողմից կոթողը դարձյալ լավ պահպանված չէ: Մեջքին փռված մազերի վրա, որոնք հասնում են մինչև գոտկատեղ, մի կերպ նշմարվում են երկու զուգահեռ գծեր, որոնք հավանաբար գոտկատեղին ամրացված դաշույնի կամ սրի շեղբն են պատկերում:

Կոթող 6. 60 սմ լայնությամբ և 120 սմ բարձրությամբ այս կոթողը դիմացի կողմից լավ է պահպանված: Գլուխը կիսակլոր է, աչքերը և Т-աձև քիթը դարձյալ պատկերված են ռելիեֆ փորագրության միջոցով, բերանը լավ պատկերված չէ. բերանի տեղում ամբողջ լայնքով ակոս է: Կրծքին ծալված ձեռքերը լավ պահպանված չեն, հազիվ նշմարվում են վեր հառած մատները, որոնք հասնում են մինչև բերան: Դաստակներին դարձյալ պատկերված են երեքական ակոսներ: Հակառակ կողմից կոթողը լավ է պահպանված. մազերը փռված են մեջքին, որոնք հասնում են մինչև գոտկատեղ: Մազերի վերջավորության վրա ռելիեֆ փորագրության միջոցով պատկերված է գոտկատեղին ամրացված դաշույն կամ սուր, որն, ըստ երևույթին, տեղադրված է պատյանի մեջ: Այն ունի մոտավորապես 60



Վեր համամիակական հանդես է (ԺԳ) դարի, թիվ 3 (51) հոլիս-սեպտեմբեր, 2015

սմ երկարություն, շեղբն ավարտվում է կլոր վերջավորությամբ բռնակով: Միջնամասում՝ շեղբի լայնքով, պատկերված են վեց զուգահեռ ակոսներ, որոնք հավանաբար կախիկի դեր են կատարում կամ պատյանի զարդանախշ են:

Կոթող 7. 65 սմ լայնություն և 125 սմ բարձրություն ունեցող այս կոթողը դիմացի կողմից լավ է պահպանված: Գլուխը կիսակլոր է, աչքերը և T-աձև քիթը պատկերված են ռելիեֆ փորագրության միջոցով, բերանը պատկերված է երկակոս աղեղի ձևով: Ձեռքերը ծալված են կրծքին, որոնց միջև մակերևույթը դարձյալ փորված է: Դաստակներին պատկերված են երեքական ակոսներ: Կոթողը հակառակ կողմից լավ է պահպանված: Մեջքին փռված մինչև գոտկատեղ հասնող մազերի վրա պատկերված է գոտկատեղին ամրացված սուր, որն ունի մոտավորապես 50 սմ երկարություն: Սրի շեղբի միջնամասում փորագրված է երկայնական ակոս, իսկ շեղբի միջնամասում՝ դարձյալ հինգ զուգահեռ ակոսներ, որոնք հավանաբար սուրը գոտկատեղին ամրացնելու համար են նախատեսել: Սրի երախակալը միացման տեղում նեղանում է, բռնակը դեպի դուրս լայնանում է[18]:

Կոթող 8. Այս կոթողը միջնամասից կոտրված է: Սա հավանաբար վնասվել է մինչև թանգարան տեղափոխվելը: Դիտելի է մինչև կրծքին ծալված ձեռքերի հատվածը: Դատելով պահպանված հատվածից՝ այս կոթողի համամասնություններն ավելի նեղ են, քան նախորդներինը: Երևում են վեր պարզված մատները, ակոսների միջոցով պատկերված ձեռքերը: Կոթողի հակառակ կողմին քանդակի հետքեր չեն պահպանվել:

Վերը թվարկված Կոթող 1-ից 8-ը հայտնաբերվել և Մարտակերտ են տեղափոխվել 1975-1976 թթ. Մարտակերտից մոտ երեք կիլոմետր հյուսիս գտնվող Բախշուն թափա տեղավայրից: Կոթողները գտնվել են այգեգործական նպատակներով տեղանքի հարթեցման ժամանակ: Այստեղից դրանք տեղափոխվել են Մարտակերտի շրջգործկոմի շենքի բակ, այնուհետև՝ քաղաքի

18 Հարկ է նշել, որ ինչպես այս, այնպես էլ Կոթող 6-ի վրա պատկերված սրերը կարիք ունեն առավել հանգամանալից ուսումնասիրության: Սակայն նախնական դիտարկումները թույլ են տալիս տեսնելու նրանց զուգահեռները իրանական մինչաքեմենյան շրջանի օրինակներում: Տես H. Mahboubian, Art of Ancient Iran, Philip Wilson Publisher, 1997, p. 303, fig. 385b.

կամրջի մոտ գտնվող բլուր, ուր նախատեսվում էր գբոսայգու ստեղծում, որտեղից էլ՝ Մարտակերտի պատմաերկրագիտական թանգարան: Մարտակերտում դրանք տեսել է նաև Բակուր Կարապետյանը: Նա 1989 թ. շրջել է Մարտակերտում և նշում է, որ փողոցի մայթեզրին ընկած էին մի քանի մարդակերպ կոթողներ: Խոսքը հավանաբար վերջիններից մի քանիսի մասին է[19]:

Կոթող 9-10: Այս կոթողներից առաջինն ունի 130 սմ բարձրություն և 59 սմ լայնություն: Երկրորդ կոթողն ունի 160 սմ բարձրություն և 90 սմ լայնություն: Կոթողները շատ նման են միմյանց պատկերման տեխնիկայով: Երկուսի գլուխն էլ օվալաձև է, դեմքին քանդակված է U-աձև ակոս, որը կարծես պատկերում է աչքերի տեղը և հավանական քիթը: Ձեռքերը դարձյալ պատկերված են ռելիեֆ փորագրության միջոցով. ծալված են կրծքին, իսկ ձեռքերի միջև մակերևույթը դարձյալ հեռացված է: Դաստակներին դարձյալ պատկերված են երեքական ակոսներ: Չնայած հստակ հայտնի չէ կոթողների հայտնաբերման վայրը, սակայն ադրբեջանցի գիտնականներ Ռ. Վահիդովը, Ռ. Գեյուշևը և Ն. Գուլիևը նշում են վերջիններից մեկի հայտնաբերման մասին[20] (Կոթող 10-ը-Ն.Ե.): Ըստ նրանց՝ այն հայտնաբերվել է Գյավուր կալայից 3 կմ հյուսիս-արևմուտք: Ելնելով երկու կոթողների պատկերագրական առանձնահատկություններից՝ կարող ենք փաստել, որ վերջիններս նույն պատկերագրական խմբին են պատկանում և նույն տարածքում են կանգնեցված եղել:

Կոթող 11, 12: Այս երկու կոթողները ներկայումս գտնվում են Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում: Կոթողներից առաջինն ունի 170 սմ բարձրություն և 65 սմ լայնություն: Երկրորդը համամասնություններով մի փոքր զիջում է առաջինին, թեպետ մեջտեղից կոտրված է: Այն ունի 50 սմ լայնություն, իսկ պահպանված մասի բարձրությունը կազմում է 57 սմ (պահպանվել է դաստակներից ներքև հատվածը): Այս երկու կոթողների պատկերման տեխնիկան շատ նման է: Դեմքին պատկերված են T-աձև

Վեմ համամասնական հատկություններ Է (ԺԳ) դարի, թիվ 3 (51) հալիս-սեպտեմբեր, 2015

19 **Կարապետյան Բ.**, Արցախի պատմաճարտարապետական հուշարձանները, «Հայաստանի բնություն», 1989, N 3, էջ 40: Մեր շնորհակալությունն ենք հայտնում Ա. Բոբոխյանին այս տեղեկությամբ կիսվելու համար:

20 **Ваидов Р.М., Геюшев Р. Б., Гулиев Н.М.,** Новые находки каменных баб в Азербайджане, “Археологические открытия 1973 года”, Москва, 1974, с. 446-447.



քիթը և աչքերը: Առաջինի բերանը պատկերված է օղակաձև ակոսի տեսքով, դաստակները ծալված են կրծքին, մատները՝ պարզված դեպի վեր: Երկրորդ կոթողի վրա բերանը քանդակված չէ, դաստակները դարձյալ ծալված են կրծքին, մատները՝ պարզված դեպի վեր: 1980-ական թթ. այս կոթողները պրոֆեսոր Հ. Պետրոսյանի կողմից փաստվել են նախկին Մարտակերտի շրջանի Սեյսուլան գյուղի տարածքում: Կոթողները հավանաբար Ստեփանակերտ են տեղափոխվել Արցախյան ազատամարտի տարիներին: Ինչպես հայտնի է, հին Սեյսուլանը ներկայումս գտնվում է ադրբեջանական զինված ուժերի հսկողության տակ:

Կոթող 13, 14, 15: Կոթողների այս խումբը հայտնաբերել ենք Նոր Հայկաջուր գյուղի շրջակայքի միջնադարյան գերեզմանոցի տարածքից: Վերջիններս լավ չեն պահպանվել, ինչը հավանաբար կապված է նրանց վերաօգտագործման հետ: Կոթողներից առաջինը կոտրված էր, պահպանված էր մոտ մեկ երրորդ մասը: Այն ընկած էր դեմքով դեպի հողը, մեջքի կողմից երևում էր ռելիեֆ փորագրության միջոցով պատկերված դեպի դուրս լայնացող պատկեր: Այդպիսով կարծես թե պատկերվել են մեջքին փռված մազերը:

Կոթողի դիմացի կողմից պահպանվել էր ձեռքերի մի փոքր մասը և նրանցից ներքև ընկած հատվածը: Դատելով պահպանված մասից՝ կարող ենք ենթադրել, որ ձեռքերը դարձյալ պարզած են դեպի վեր: Կոթողի պահպանված մասի չափերն են՝ 80 սմ բարձրություն և 50 սմ լայնություն: Կոթողներից երկրորդը կիսով չափ խրված էր հողի մեջ, հստակ եռամաս է, երևում էր միայն գլխի հատվածը, իսկ գոտկատեղից ներքև կոտրված էր: Ձեռքերը դարձյալ պարզված են դեպի վեր: Հակառակ կողմից պատկերագրության հետքեր չկան: Կոթողի պահպանված մասի չափերն են՝ բարձրություն՝ 70 սմ, լայնություն՝ 45 սմ: Մյուս կոթողը գտնվում էր վերջինից մոտ 30 մ հեռավորությամբ: Սա ընկած էր դեմքով դեպի հողը, հետևի կողմից պատկերագրության հետքեր չուներ: Դիմացի կողմից կոթողը կարծես թե երկմաս էր, հազիվ նշմարվում էին աչքերը և քիթը: Այդ կոթողի չափերն են՝ 140 սմ բարձրություն և 60 սմ լայնություն:







Է (ԺԳ) պարհ, թիվ 3 (51) հուլիս-սեպտեմբեր, 2015

Կոթող 16, 17: Առավել հետաքրքրություն է ներկայացնում հաջորդ երկու կոթողների բացահայտումը: Դրանցից առաջինը հայտնաբերվել է Գյավուրկալա հնավայրի վաղքրիստոնեական եկեղեցուց մոտ 70 մ արևելք: Կոթողը հայտնաբերվել է Հ. Պետրոսյանի և Լ. Կիրակոսյանի կողմից՝ վերգետնյա հնագիտական իրերի որոնման ընթացքում՝ փորված զինվորական խրամատի հատակին: Իրականացված պեղումների արդյունքում պարզեցինք, որ կոթողը տեղադրված էր վաղքրիստոնեական քարարկղային թաղման վրա: Տեղադրված էր արևելք-արևմուտք ուղղվածությամբ, ինչը փաստում է, որ այն վերաօգտագործվել է և ծառայել զուտ որպես շինանյութ: Կոթողի վրա դիմացից պատկերված էին Ս-աձև քիթը և դեպի վեր պարզված մատները: Մատներից ներքև կոթողը կոտրված էր: Հակառակ կողմից կոթողը պատկերագրություն չունի: Կոթողի լայնությունը 44 սմ է, պահպանված բարձրությունը՝ 60 սմ: Եվս մեկ մարդակերպ կոթող մենք հայտնաբերեցինք Տիգրանակերտի վաղքրիստոնեական երկրորդ եկեղեցու հարավային բակի՝ դեպի հարավային միակ մուտքն առաջնորդող խոշոր սալերի շարքում: Կոթողն ամբողջական է և հստակ եռամաս: Երկու կողմից էլ այն հարթեցված է և որևէ պատկերագրություն չունի, սակայն դատելով կոթողի գոտիների ակոսներից՝ կարող ենք ենթադրել, որ այն պառկեցված է եղել դեմքով դեպի վեր: Ուստի խիստ հավանական է, որ կոթողը նախապես ունեցել է քանդակներ, սակայն սալահատակի մեջ տեղադրվելուց հետո ժամանակի ընթացքում քայքայվել է, և պատկերները ջնջվել են: Կոթողի չափսերն են՝ բարձրություն՝ 110 սմ, լայնություն՝ 50 սմ:

Այսպիսով, Արցախի մարդակերպ կոթողների ուսումնասիրության արդյունքում կարողանում ենք որոշ պատկերացում կազմել այն կանգնեցնողների հավատալիքների, իմաստաբանության, նրանց անցած ճանապարհի վերաբերյալ: Դա հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմելու ինչպես հազարամյակների պատմություն ունեցող գեղարվեստական երևույթների և արվեստի զարգացման ընթացքի, այնպես էլ այն պատմական միջավայրի մասին, որում ձևավորվել է այդ արվեստը: Կոթողների ուսումնասիրությունը կարևոր է Արցախի երկաթեդարյան մշակույթի ուսումնասիրության տեսանկյունից: Մենք հավանական ենք համարում, որ Արցախում հայտնի քարե մարդակերպ կոթողները պատկերել են մահացած և հերոսացած մարդկանց, հնարավոր է՝ զինվորների կամ սոցիալական

բարձր դիրք գրավող այլ տղամարդկանց: Դրանք «հավերժացրել են» հանգուցյալի հիշատակը և ծառայել որպես հանգուցյալին նվիրված հիշատակի արարողությունների օբյեկտ:

Ուստի այս նախնական քննության արդյունքում կարելի է հավանական համարել, որ՝

ա. Արցախի քարե մարդակերպ կոթողները կանգնեցվել են առնվազն Ք.ա. 8-րդ դարում կամ դրանից հետո,

բ. Արցախը դեռևս երկաթի դարում կարևոր և ինքնուրույն մի հանգույց է եղել իրանական հարթավայրային շրջանների և Հյուսիսային Կովկասի միջև:

Նժդեհ Ա. Երանյան-Գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է Արցախի և Ուտիքի մշակույթը և պատմությունը, մշակութային ժառանգությունը և դրա պահպանության խնդիրները, մշակութային ժառանգությունը Ղարաբաղյան հակամարտության գոտում և մշակութային մարդաբանությունը: Շուրջ մեկ տասնյակ գիտական հոդվածների հեղինակ է, որոնք վերաբերում են Հայաստանի և Արցախի հնագիտությանը, հատկապես՝ քարե մարդակերպ կոթողների ուսումնասիրությանը:

Summary

NEW DATA ON IRON AGE CULTURE IN ARTSAKH REGION

Nzhdeh A. Yeranyan

Key words – menhir, the vishap stone stelae, anthropomorphic stone stelae, Artsakh, Utik, Scythian culture, Arjaq Qaleh.

The artistic treatment of stone in South Caucasian region has been known for millennia. There are various known menhirs, vishap stelae, phallic and anthropomorphic stelae, etc. This assemblage could be followed until various stelae of the medieval period. During this long chronological period, all forms of stelae changed morphologically, typologically and semantically, but, most probably, had certain ideological similarities. The anthropomorphic stelae of eastern regions of historical Armenia (Artsakh and Utik provinces) are of a special importance but still remain unstudied. In this article are presented these anthropomorphic stone stelae, problems of their chronology, iconography and ideology.

The mentioned stelae are flat and prolonged slabs, approximately rectangular in section, that are divided into three parts by two horizontal lines: the head, the body and the part below the waist. The stelae are 30–60 cm wide, 120–140 cm high and up to 20 cm thick. There are seventeen stelae of this type known in the mentioned region. Each stela will be described in our paper separately.

The stone anthropomorphic stelae, which were accidentally found in Artsakh and surrounding plain territories, judging by their iconography, morphological

specifics as well as through comparison with famous parallels from the neighboring regions, could be dated back to VII–VI cc. BC. Despite the fact that monumental sculpture is widespread, has a long history and appears separately in each ethno-cultural group, we are using the data about similar anthropomorphic stelae in the region to discuss the ideology of the stelae under discussion, to reconstruct their importance and ethno-cultural environment as well as to interpret them. These anthropomorphic sculptures are similar to the Scythian stone anthropomorphic sculptures known from the Northern Caucasus, Black Sea basin, Crimea, etc. The Scythian stelae, as a rule, represent the Scythian warrior (probably an ancestor) and were placed on burials. Currently, there are 160 stelae of that type.

Similar stelae we meet also in Iranian steppes. These stelae were first described during Charles Burney's Meskinsahr survey in 1978 .

Thus, as a result of the study of these stelae, we could gain some idea about the beliefs, ideology and history of the people who created them. It allows us to understand the history of artistic phenomena and of the historical environment in which this art was formed. It is possible that the stone anthropomorphic stelae under consideration depicted the dead or heroes, soldiers or high-ranked males. These monuments "immortalized" the memory of the deceased and were objects of memorial ceremonies devoted to them.

Резюме

НОВЫЕ ДАННЫЕ О КУЛЬТУРЕ ЖЕЛЕЗНОГО ВЕКА В АРЦАХЕ

Нжде А. Еранян

Ключевые слова - менгиры, каменные стелы вишапы, антропоморфные изваяния, Арцах, Утик, скифская культура, Аржак кале.

Художественная обработка камня на територии Армянского нагорья была известна еще тысячилетия назад. Нам известны различные менгиры, вишапы, фаллосы, антропоморфные изваяния и т.д. Такая обработка камня доходит до средневековья и до хачакров. В этом большом хронологическом периоде различные каменные изваяния несли морфологические, типологические и семантические изменения, но видимо у них была одинаковая идеология. Среди каменных изваяний следует обратить внимание на антропоморфные изваяния, которые известны в Восточных регионах Армении-в историческом Арцахе и Утике. Эта статья первая попытка представить каменные антропоморфные изваяния из этих регионов и проблемы их иконографии, хронологии и идеологии.

Эти изваяния примерно прямоугольные в разрезе, плоские и продолговатые плиты, которые при помощи двух горизхонтальных поясов

Վէմ հասարակական գիտական հանդես Է (ԺԹ) տարի, թիվ 3 (51) հուլիս-սեպտեմբեր, 2015

делятся на три части. Таким образом отмечены три части тела: голова, талия и нижняя часть. Их ширина примерно 30-60 см, высота 120-140 см и толэина примерно 20 см. В данный момент из этих регионов нам известны 17 таких изваяний.

Изучая культуру Армянского нагорья и окрестности мы заметили, что аналоги этих изваяний были распространены по всему региону в 1-ом тыс. до н.э.. Подобные каменные изваяния встречаются как в Лори-берде, Джуджеване, Гаржисе, так и в Хаккари /часть Корджайкского региона исторической Армении/, степях Ирана, в особенности Восточном Атрпатакане, так же на Северном Кавказе, Причерноморье, Крыме и вообще в других регионах Евразейских степей.

В итоге изучения этих изваяний мы смогли немного понять верования и идеологию тех, кто их воздриг. Мы считаем, что Изваяния, которые известны в Арцахе изоброжали умерших и героизированных людей, возможно солдатов или других, которые были в высшем социальном строе. Они "увековечили" память умершего.